# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

03 հունիսի 2026 թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Վարդանյանը, Ծովինար Հովհաննիսյանը, Եղիշե Նազարյանը, Մուշեղ Ներսիսյանը, Սամվել Ոսկանյանը, Սոնա Մարգարյանը, Կարեն Մանասերյանը, Մարատ Շահբազյանը, Տիգրան Նազարյանը և Վահե Վարդանյանը:

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը**

**Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը**

**ԼՍԵՑԻՆ.**

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու թիվ 9 նստաշրջանի՝ 2026 թվականի հունիսի 3-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Լեհաստանի Հանրապետության Չեխանովեց քաղաք մեկնող Եղեգնաձոր համայնքի պատվիրակության անհատական կազմը հաստատելու մասին:

2) «Եղեգնաձորի բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու, իրավաբանական հասցեն սահմանելու, կանոնադրությունը, կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

3) Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի 18-րդ փողոցից սկսվող նրբանցքը համարակալելու մասին:

4) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 5-ի N 54-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 69-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԵԽԱՆՈՎԵՑ ՔԱՂԱՔ ՄԵԿՆՈՂ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, համաձայն Չեխանովեցի քաղաքապետի պաշտոնական հրավերի՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի և Լեհաստանի Հանրապետության Չեխանովեց քաղաքի հետ կնքված համագործակցության համաձայնագրի շրջանակներում սույն թվականի հունիսի 19-ից 26-ը Չեխանովեց քաղաք մեկնող Եղեգնաձոր համայնքի պատվիրակության անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետով հաստատված պատվիրակության գործուղման ծախսերն իրականացնել Եղեգնաձոր համայնքի 2026 թվականի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 01 դաս 01 (օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կատավարում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4222 (արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր) և 4237 (ներկայացուցչական ծախսեր) հոդվածներով նախատեսված ֆինանսական միջոցներից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 70-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ.</u>**

***«ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Հիմնադրել «Եղեգնաձորի բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ «Եղեգնաձորի բարեկարգում և կանաչապատում» ՀՈԱԿ):

2. Սահմանել «Եղեգնաձորի բարեկարգում և կանաչապատում» ՀՈԱԿ-ի իրավաբանական հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք, քաղաք Եղեգնաձոր, Շահումյան փողոց, շենք 1:

3. Հաստատել «Եղեգնաձորի բարեկարգում և կանաչապատում» ՀՈԱԿ-ի՝

1) կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 71-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐՆԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 18-ՐԴ ՓՈՂՈՑԻՑ ՍԿՍՎՈՂ ՆՐԲԱՆՑՔԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետը, Վերնաշեն բնակավայրի 18-րդ փողոցից սկսվող նրբանցքի մասով

Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե կողմից հաստատված հայտը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի 18-րդ փողոցից սկսվող փողոցը համարակալել որպես՝ Եղեգնաձոր համայնք, գյուղ Վերնաշեն, 18-րդ փողոց, 4-րդ նրբանցք:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում էլեկտրոնային եղանակով Կադաստրի կոմիտեի հասցեների միասնական ռեեստրի տեղեկատվական համակարգ ներբեռնելու պահից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 72-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 54-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 5-ի «Եղեգնաձոր համայնքի 2026 թվականի բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» N 54-Ն որոշման հիմնական մասի 1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի հունվարի 7-ի թիվ 03-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը. Պակասեցնել՝ գործառնական դասակարգման 11.01.02 (պահուստային ֆոնդ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից 6 000 000 (վեց միլիոն) ՀՀ

դրամ, որից 4 000 000 (չորս միլիոն) դրամը ավելացնել գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 01 դաս 01 (օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կատավարում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4222 (արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր) հոդվածին և 2 000 000 (երկու միլիոն) դրամը՝ նույն ոլորտի 4237 (ներկայացուցչական ծախսեր) հոդվածին, Լեհաստանի Հանրապետության Չեխանովեց քաղաք մեկնող Եղեգնաձոր համայնքի պատվիրականության գործուղման ծախսերը հոգալու նպատակով:

2. Թույլատրել սույն որոշման առաջին կետում նշված՝ գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 01 դաս 01 (օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կատավարում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4222 (արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր) հոդվածով նախատեսված գումարն ամբողջությամբ փոխանցելու Եղեգնաձորի համայնքապետարանին պատկանող ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի VIZA բանկային քարտին, գործուղման վերաբերյալ հաշվետվություններն ընդունել համաձայն նշված քարտով իրականացված ծախսերի վերաբերյալ համապատասխան անդորրագրերի:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 73-Ն)*

**ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ _____

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ _____

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԾՈՎԻՆԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ _____

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

*Նիստն արձանագրեց՝* Մարինե Հովհաննիսյանը

_____